ՀԱՒԱ, տես ՀԱՎԱՅ:

ՀԱՒԱԼԱ, ՀԱՒԱԼԱՅ, ա. 1. բերդ, 2, բլուր, 3. պարտապահանջ:

ՀԱՒԱՍ, ա. փափաք, ախորժակ, ցանկութիւն:

ՀԱՒԱՏԻԿ, մ. հ., ա՛յ իմ հաւատիկ Աստուած, ո՛վ իմ Աստուածս որուն կը հաւատամ:

ՀԱՔԻՄ, ա. բժիշկ, գիտուն մարդ:

ՀԵՐԻՑ (ի վեր), մ. հ., անցեալ տարուընէ ի վեր:

ՀԷՃԱՊ, ա. աճապարանք:

ՀԷՐԱՄ, տես ՀԱՐԱՄ:

ՀԷՔԻՄ, տես ՀԱՔԻՄ:

ՀԸՆՑԵՂ, մ. հ., այն տեսակ, այնպիսի:

ՀԸՆՑԿՈՒՆ, տես ՀՆՑԳՈՒՆ:

ՀԻՏՐԱՑ, Ի ՀՏՐԱՑ, Ի ՀԻՏՐԱՑ, մ. հ., իրարու հետ միասին, մէկանց: Ա. բ. հիրաց (տես Ճանիկեան):

ՀԻՒՆԷՐ, պ. տաղանդ, հնարամտութիւն:

ՀԻՔԻՄԱԹ, ա. տէրութիւն. հիւքիւմաթով, տիրականօրէն, իշխանավայել կերպով:

ՀԻՔՄ, ա. տիրապետութիւն, իշխանութիւն:

ՀՄՆԱՒԵՐ, մ. հ., այս քաղքիս, այս հմնաւիրիս, հիմէն քանդուելիք այս քաղաքին:

ՀՈՂՎԱՐՔ, ՀՈՂՎՐՏԻՔ, մ. հ. գերեզման, գերեզմաննոց: Ա. բ. հովրտիք, գերեզմաննոց (տես Ճանիկեան):

ՀՈՒՍԱՆ, Ա. բ. այստեղ:

ՀՈՒՏԱ, Ա. բ., այդտեղ:

ՀՌՈՄ, ՀՌՈՄՔ, Հոռոմներու երկիը, Արեւմուտք:

ՀՕՐԻՆ, գ. ինչո՞ւ:

Ձ.

ՁՆԱՆ, Ա. բ. , ձիւնի:

Ղ.

ՂԱՁԱԼ, ՂԱՁԷԼ, տես ԽԱՁԱԼ, ԽԷՁԷԼ:

ՂԱԹԱՐ, մ. հ., ա. քատար, չափ, որքանութիւն. զհայրէնին

ղաթար ասէ, հայրէնը հարկ եղած չափով կ’ըսէ. որ ղաթար ջորին չը քաշէ, որուն չափ ծանրութիւն մը ջորին դի կրնար քաշել:

ՂԱԼԱՄ, ա. քալէմ, գրիչ, գրչեղէգ:

ՂԱԼԱՊԱՅ, թ. քալապայ, մեծ բազմութիւն:

ՂԱԼԱՏ, տես ԽԱԼԱՏ:

ՂԱԼԱՏԻԼ, սխալիլ: